**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/44 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/44-1 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի փետրվար 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՆՅՈՒ ՌՈՄԱ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/44-1 պայմանագրի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել ավելացնել ձեռքբերվող ապրանքի քանակը, որը չի գերազանցում Պայմանագրի գնի 10%-ը:

**Փոփոխության նկարագրություն.** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՆՅՈՒ ՌՈՄԱ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/44-1 Պայմանագրի.

- Հավելված թիվ 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների ձեռքբերման քանակը ավելացվել է պայմանագրի գնի 10%-ով, որը կազմում է 15999999.96 (տասնհինգ միլիոն ինը հարյուր իննըսունինը հազար ինը հարյուր իննըսունինը դրամ իննըսունվեց լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
- 3.1 կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Վաճառողի կողմից մատակարարաված ապրանքի գինը կազմում է «175999999.56» (հարյուր յոթանասունհինգ միլիոն ինը հարյուր իննըսունինը հազար ինը հարյուր իննըսունինը դրամ հիսունվեց լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն»:
- Հավելված թիվ 1-ով ներկայացված աղյուսակի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված «Ընդհանուր գումար/ՀՀ դրամ» սյունակի «159999999.60» ՀՀ դրամ գումարը համապատասխանաբար փոփոխվել է «175999999.56» ՀՀ դրամով:
- Հավելված N 3-ով ներկայացված վճարման ժամանակացույցը խմբագրվել և հաստատվել է համաձայն՝ 2024 թվականի հունվարի 1-ին կնքված համաձայնագրի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջներ:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-**